Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև Հայաստանի Հանրապետությունում կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

ՀՀ-ում Կարմիր խաչի միջազգային կոմիտեն /ԿԽՄԿ/ գործում է 1992թ-ից: Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ ԿԽՄԿ-ն գործունեություն է իրականացրել՝ սատարելով իշխանություններին հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց խնդիրների լուծմանը: Նրա ներկայացուցիչները այցելել են ԼՂ հակամարտության հետևանքով անազատության մեջ գտնվողներին և օժանդակություն ցույց տվել նրանց հայրենադարձման ու տեղափոխման հարցերում :

ԿԽՄԿ-ը, ներկայություն ունենալով նաև Լեռնային Ղարաբաղում, հետևում է Ադրբեջանի հետ սահմանամերձ գոտում բնակվող քաղաքացիական ազգաբնակչության դրությանը՝ համոզվելու համար, որ միջպետական սահմանի վրա հնարավոր լարվածության դեպքում նրանց մարդասիրական կարիքները պատշաճ արձագանք կստանան:

1993թ. նոյեմբերի 5-ին կնքվել է համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև Հայաստանի Հանրապետությունում կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին»: Հաշվի առնելով հակամարտությունների գոտիներում ԿԽՄԿ-ի բացառիկ դերը, որն իր ներկայությունն է ապահովում և գործունեությունն իրականացնում առանց հաշվի առնելու կարգավիճակային կամ այլ քաղաքական խնդիրները՝ ՀՀ ԱԳՆ-ն ընդհանուր առմամբ նպատակահարմար է գտնում վերոնշյալ համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրության ստորագրումը: Վերջինս նախատեսում է ԿԽՄԿ-ի արտոնությունների և անձեռնմխելիությունների ծավալի ավելացում, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիներին զինվորական/այլընտրանքային ծառայությունից ազատելու վերաբերյալ, ինչպես նաև դրույթ անձնական տվյալների պաշտպանության մասին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԵԿԱԼ

ՌՈԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ